Րաֆֆի

Ջալալեդդին

Ժ

Հուլիս ամիսը վերջանալու մոտ էր: Դժբաղտ Բայազեդը քրդերից, բաշիբոզուկներից պաշարվելով, քանդվելով, կողոպտվելով, և իր թշվառ բնակիչները սրի բերնում ու գերության մեջ կորցնելուց հետո, կրկին ռուսաց ձեռքն էր անցել: Սուլեյման– փաշան հետ էր մղվել: Ջալալեդդինի հրոսակը ցրված էր, և հարուստ ավարով ամեն մարգդ իր տեղը դառնալու վրա էր: Հին Բագրևանդի ամբողջ գավառը և պատմական Վաղարշակերտը բոլորովին դատարկացել էին իրանց հայ բնակիչներից: Ալաշկերտցի գաղթականները Երևանի նահանգում մուրացկանություն էին անում և նրանց թողած ավերակները դեռ ծխում էին մոխիրի միջից . . . :

Երեկոյան վերջալույսը դեռ ճառագայթում էր սարերի գագաթների վրա:

Մի տղամարդ միայնակ և դանդաղ քայլերով գնում էր լեռնային անծուկ ճանապարհով և խուլ մելամաղձական ձայնով երգում էր մի տխուր մեղեդի: Նա գնում էր անվճռական ընթացքով, կարծես, ակամա ընտրել էր այն ուղին և բոլորովին վստահ չէր, թե սա կհասներ այն նպատակին, որին դիմում էր ամենայն անձնվիրությամբ: Հանկարծ նրա ետևից լսելի եղավ մի ձայն .

Ո՞վ ես . ետ քաշվի՛ր:

Ճանապարհորդը դադարեց երգելուց, հրացանը ուսից վեր բերեց, և ետ նայելով, տեսավ, որ գալիս էր մի ձիավոր: Նա պատասխանեց .

Յատուկ Պոէմ

Անցի՛ր:

Ձիավորը մոտեցավ, ողջունեց և ապա հարցրեց.

Բարի լինի . ո՞ւր այդպես:

Բարի է, փառք աստուծո, պատասխանեց ճանապարհորդը: Ես Ջաֆար-բեկի հովիվն եմ, մեր չադրները շատ հեռու չեն այստեղից . մեր մատակներից մեկը այս երեկո կորավ, պտռում եմ:

Հետո նա հարցրեց ձիավորին .

Դու ո՞ւր այդպես, աստված հաշողի, գնում ես:

Շեյխի բանակը, նամակ եմ տանում:

Ումի՞ց,

Սուլեյման-փաշայից: Բաները վատ են գնում Ղարսի մոտ: Փաշան կանչեց ու ասաց . ո՞վ կլինի, որ այս նամակը երկու օրում հասցնի շեյխին, կստանա մի լավ փեշքաշ ու խալաթ: Ես մոտեցա, գլուխ տվեցի ու ասեցի . ձեր ոտքի հողը լինե՛մ . ես կհասցնեմ, իմ արաբացի նժույգը ծտի նման է թռչում: Նա ձեռքը քսեց մեջքիս, էֆերի՛մ, ասաց և տվեց նամակը:

Հիմա ո՞րտեղ է շեյխը:

Ես հարցրի, ինձ ասացին, այստեղ մոտիկ Ղանլի-Դարայում (արյունա ձոր) է իջևանել, պատասխանեց ձիավորը: Ի՞նչպես է, որ դու չես իմանում:

Սարի հովիվը ո՞րտեղից կարա իմանալ այս բաները . տեսնում ես, ամեն օր գալիս են, գնում են, մարդ չի իմանում ի՛նչ խաբար է: Կրակ ունե՞ս, հարցրեց ձիավորը, չախմախիս քարը կորել է, ամբողջ օր չեմ ծխել, գլուխս դդում է դարձել:

Կգտնվի, պատասխանեց առաջինը, և ծոցից դուրս բերելով հրահան ու աբեթ, սկսավ զարկել կայծքարին:

Յատուկ Պոէմ

Ձիավորը կռացավ, մոտեցրեց չիբուխը, և նա վառած աբեթը դրեց ծխախոտի վրա: Նույն միջոցին նա առիթ ունեցավ լավ զրնել ձիավորի դեմքը: Նա շնորհակալություն հայտնեց, և ծխելով քշեց իր ձին:

Տասը քայլ հազիվ հեռացել էր ձիավորը, նրա ետևից գոռաց հրացանը և ողորմելին գլորվեցավ ձիուց ցած: Ձին խրտնեցավ և ճանապարհից դուրս եկավ, իր հետ քաշ տալով դիակը, որի մի ոտը մնացել էր ասպանդակի մեջ: Ձին երկար վազվզում էր ավելի և ավելի կատաղելով, մինչև թամքը շուռ եկավ փորի տակը, և նա կանգնեց: Այն ժամանակ եղեռնագործը մոտեցավ, բռնեց ձիուն և սկսեց որոնել սպանվածի ծոցերը, գրպանները, որի մարմինը սաստիկ զարկվելով քարերին, բոլորովին ջարդուփշուր էր եղել: Նա գտավ նամակը, որի հասցեն գրած էր շեյխի անունով, թաքցրեց իր ծոցի գրպանում, դիակը ձգեց մի փոսի մեջ, հետո ուղղելով սպանվածի ձիու թամքը, նստեց վրան, և սկսեց վազեցնել դեպի Ղանլի-Դարա, ուր գտնվում էր Ջալալեդդինի բանակը:

Նա հասավ շեյխի բանակը, երբ արևը մտել էր. բայց մութը դեռ բոլորովին չէր պատել աշխարհը: Նամակը նա հանեց իր ծոցից և խրեց գլխի չալմայի փաթեթի մեջ, այնպես, որ նամակը կիսով չափ երևում էր: Նա, որպես սովորաբար ծրարում են նամակները արևելքում, մի երկայն խողովակաձև գալարված թուղթ էր, որի մեջտեղից գոտիի նման փաթաթել էին մի ուրիշ թղթի կտոր և կնքել էին:

Ի՞նչ մարդ ես, հարցրեց նրանից բանակի պահնորդներից մեկը:

Սուրհանդակ, պատասխանեց նամակաբերը և համարձակ քշեց իր ձին դեպի շեյխի վրանը:

Այդ մարդը Մըստոն էր:

Յատուկ Պոէմ